


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2015 թվականի նոյեմբերին


(վերլուծություն)

2015 թվականի նոյեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 15945 գործարք, որոնց քանակը 2015 թվականի հոկտեմբեր ամսվա համեմատ նվազել է 0.7 %-ով, իսկ 2014 թվականի նոյեմբերի համեմատ՝ 18.3 %-ով:

2015 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4670 օտարման գործարքի 73.6 %-ը կազմել է առուվաճառքը, 25.4 %-ը՝ նվիրատվությունը և 1.0 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 37.7 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 41.1 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2015 թվականի նոյեմբերին, 2015 թվականի հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքները նվազել են 2.7 %-ով, իսկ 2014 թվականի նոյեմբերի համեմատ՝ աճել 12.4 %-ով:

2015 թվականի նոյեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 72.1 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2015 թվականի նոյեմբերին, 2015 թվականի հոկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 3.8 %-ով, իսկ 2014 թվականի նոյեմբերի համեմատ՝ 16.6 %-ով:

2015 թվականի նոյեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	նոյեմբեր 2014 թ.	նոյեմբեր 2015 թ.	հոկտեմբեր 2015 թ.
<b>Կենտրոն</b>	428000	428000	428000
<b>Արաբկիր</b>	356600	356700	356700
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	282700	282800	282800
<b>Նոր Նորք</b>	252800	253600	253500
<b>Ավան</b>	260200	261100	260950
<b>Էրեբունի</b>	251000	252200	252200
<b>Շենգավիթ</b>	256650	257350	257350
<b>Դավթաշեն</b>	275200	276300	276200
<b>Աջափնյակ</b>	249600	250400	250350
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	242500	243600	243500
<b>Նուբարաշեն</b>	156150	157000	156900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի նոյեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի հոկտեմբերի համեմատ աճել են 0.04%-ով:

2015 թվականի նոյեմբերին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 322 բնակարան, որոնց քանակը 2015 թվականի հոկտեմբերի համեմատ նվազել է 18.3 %-ով, իսկ 2014 թվականի նոյեմբերի համեմատ՝ 4.5 %-ով:

2015 թվականի նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով,

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		նոյեմբեր 2014 թ.	նոյեմբեր 2015 թ.	հոկտեմբեր 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116000	116000
	Ապարան	57550	58050	58000
	Թալին	65950	66300	66300
Արարատ	Արտաշատ	96900	98150	98100
	Մասիս	115700	115800	115800
	Վեդի	100700	101550	101500
	Արարատ	75500	77100	77000
Արմավիր	Վաղարշապատ	154150	154100	154100
	Արմավիր	121200	121200	121200
	Մեծամոր	87500	87550	87550
Գեղարքունիք	Սևան	99200	99400	99400
	Գավառ	59850	60300	60250
	Մարտունի	107700	107700	107700
	Վարդենիս	44800	45050	45000
	Ճամբարակ	28700	28750	28750
	Վանաձոր	88400	88500	88500
Լոռի	Ստեփանավան	74500	74650	74600
	Սպիտակ	99800	99850	99800
	Ալավերդի	55000	55400	55400
	Տաշիր	47300	47350	47350
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20300	20500	20500
	Աբովյան	155100	155100	155100
	Լոր Հաճն	128600	128550	128550
Կոտայք	Բյուրեղավան	108150	108200	108200
	Եղվարդ	109400	109550	109400
	Հրազդան	63850	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292400	292400
	Չարենցավան	85550	85500	85500
	Գյումրի	109300	109250	109250
	Արթիկ	66700	66900	66850
Շիրակ	Մարալիկ	40700	40900	40850
	Գորիս	122400	123250	123100
	Կապան	93100	94350	94200
Սյունիք	Սիսիան	91250	92000	92000
	Մեղրի	80950	82550	82400
	Ագարակ	46900	47400	47300
	Քաջարան	94700	94650	94650
	Դաստակերտ	8000	8000	8000
	Վայք	95000	95000	95000
	Եղեգնաձոր	125550	125800	125700
Վայոց ձոր	Ջերմուկ	112950	112950	112950
	Դիլիջան	113800	115200	115100
	Իջևան	118300	118450	118450
Տավուշ	Բերդ	60250	60300	60300
	Նոյեմբերյան	49900	50200	50150
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի հոկտեմբերի համեմատ աճել են 0.1%-ով:

2015 թվականի նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 360 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 102 գործարք, մարզերում՝ 258 գործարք: 2015 թվականի նոյեմբերին, 2015 թվականի հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 3.5 %-ով, ընդ որում, Երևանում՝ 19.7 %-ով, իսկ մարզերում՝ աճել 4.9 %-ով: 2015 թվականի նոյեմբերին 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 27.0 %-ով, ընդ որում, Երևանում՝ 36.6 %-ով, իսկ մարզերում՝ 22.3 %-ով:

2015 թվականի նոյեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ<sup>2</sup> և տնամերձի 400.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	նոյեմբեր 2014 թ.	նոյեմբեր 2015 թ.	հոկտեմբեր 2015 թ.
<b>Կենտրոն</b>	476100	476100	476100
<b>Արաբկիր</b>	383000	383000	383000
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	295000	295000	295000
<b>Նորք-Մարաշ</b>	319200	319200	319200
<b>Ավան</b>	270500	270500	270500
<b>Էրեբունի</b>	239750	239750	239750
<b>Շենգավիթ</b>	255000	255000	255000
<b>Դավթաշեն</b>	276000	276000	276000
<b>Աջափնյակ</b>	250050	250050	250050
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	238000	238000	238000
<b>Նուբարաշեն</b>	150800	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի նոյեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի հոկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ<sup>2</sup> և տնամերձի 1000.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		նոյեմբեր 2014 թ.	նոյեմբեր 2015 թ.	հոկտեմբեր 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94950	94950
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41100	41100
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100800	100750
	Ստեփանավան	90000	91100	91000
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157300	157300
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	119250	119250
	Արթիկ	63100	63350	63250
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100650	100650
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84600	84600
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90150	90150
	Եղեգնաձոր	116600	116750	116750
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	115400	115300
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները

(ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի հոկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի նոյեմբերին հանրապետությունում օտարվել է 1677 միավոր (829.65 հա) հող, որից Երևանում՝ 93 միավոր (5.58 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 1027 միավոր (780.49 հա), որից Երևանում՝ 5 միավոր (0.10 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 441 միավոր (34.75 հա), որից Երևանում՝ 48 միավոր (2.69 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 173 միավոր (11.05 հա), որից Երևանում՝ 39 միավոր (2.76 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 14 միավոր (2.29 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.03 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 2 միավոր (0.08 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 20 միավոր (0.99 հա) ընդհանուր մակերեսով:

2015 թվականի նոյեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1449 միավորի (728.33 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 68 միավոր (3.75 հա), նվիրատվության գործարք՝ 222 միավորի (100.97 հա), որից Երևանում՝ 24 միավոր (1.83 հա) և փոխանակության գործարք՝ 6 միավորի (0.35 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.001 հա):

Հանրապետությունում 2015 թվականի նոյեմբերին, 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 26.7 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 57.4 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 0.6 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 33.3 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 161.22 հա, որից 155.63 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 26.2 %-ը կամ 380 միավորը (141.70 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 26 միավոր (1.43 հա), իսկ 73.0 %-ը կամ 1058 միավորը (586.48 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 41 միավոր (2.27 հա): 2015 թվականի նոյեմբերին հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 11 գործարք /0.15 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարք:

Ստորև ներկայացված է 2015 թվականի նոյեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	0	0.00	13	0.86	13	0.57	4	0.09	1	0.03	21	1.22	15	0.94
Արագածոտն	16	9.76	0	0.00	2	0.20	0	0.00	61	49.30	0	0.00	19	2.35	5	0.78
Արարատ	35	36.60	2	0.37	37	3.54	42	3.18	74	48.08	0	0.00	31	2.69	6	0.15
Արմավիր	5	14.27	1	0.06	0	0.00	1	0.01	115	141.37	0	0.00	50	5.42	4	0.08
Գեղարքունիք	3	2.33	0	0.00	7	0.97	5	0.28	129	53.59	0	0.00	12	1.55	2	0.08
Լոռի	1	0.52	2	0.29	4	0.04	13	0.93	230	128.11	1	0.01	9	1.06	3	0.01
Կոտայք	19	54.04	1	0.08	77	1.15	10	0.14	64	50.60	1	0.03	53	5.15	5	0.58
Շիրակ	11	3.71	1	0.12	6	0.09	7	0.17	66	66.49	0	0.00	18	2.00	3	0.16
Սյունիք	3	1.94	0	0.00	4	0.20	1	0.36	16	15.56	0	0.00	5	0.48	0	0.00
Վայոց ձոր	0	0.00	1	0.57	0	0.00	3	0.09	12	1.42	0	0.00	1	0.14	0	0.00
Տավուշ	4	2.76	1	0.17	2	0.06	7	0.28	12	6.24	0	0.00	8	0.72	1	0.01
Ընդամենը	97	125.93	9	1.66	152	7.11	102	6.01	783	560.85	3	0.07	227	22.78	44	2.79

Ստորև ներկայացված է 2015 թվականի նոյեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	16	0.34	0	0.00	7	0.17	9	0.17	10	1.08	0	0.00	0	0.00	6	0.69	4	0.39
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	16	9.90	14	9.70	0	0.00	2	0.20	0	0.00
Արարատ	2	0.05	0	0.00	0	0.00	2	0.05	111	42.96	32	35.92	2	0.37	37	3.54	40	3.13
Արմավիր	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	5	13.53	4	13.47	1	0.06	0	0.00	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	14	2.38	2	1.13	0	0.00	7	0.97	5	0.28
Լոռի	6	0.04	0	0.00	1	0.01	5	0.03	14	1.74	1	0.52	2	0.29	3	0.03	8	0.90
Կոտայք	54	0.15	0	0.00	51	0.12	3	0.03	53	55.25	19	54.04	1	0.08	26	1.03	7	0.10
Շիրակ	10	0.31	1	0.12	3	0.02	6	0.17	4	0.07	0	0.00	0	0.00	3	0.06	1	0.01
Սյունիք	3	0.47	0	0.00	2	0.11	1	0.36	5	2.04	3	1.95	0	0.00	2	0.09	0	0.00
Վայոց ձոր	1	0.57	1	0.57	0	0.00	0	0.00	3	0.09	0	0.00	0	0.00	0	0.00	3	0.09
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	14	3.27	4	2.76	1	0.17	2	0.06	7	0.28
<b>Ընդամենը</b>	<b>93</b>	<b>1.94</b>	<b>2</b>	<b>0.69</b>	<b>64</b>	<b>0.43</b>	<b>27</b>	<b>0.82</b>	<b>249</b>	<b>132.31</b>	<b>79</b>	<b>119.49</b>	<b>7</b>	<b>0.97</b>	<b>88</b>	<b>6.67</b>	<b>75</b>	<b>5.18</b>

2015 թվականի նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 18 գործարք (6.44 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2015 թվականի նոյեմբերին, 2014 թվականի նոյեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 17.8 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 33.3 %-ով, իսկ մարզերում աճել է 21.7 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 46.3 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ նվազել է 12.9 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 56.3 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 16.7 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2015 թվականի նոյեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մավերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մավերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	13	9.19	77.6	790.6	382.8	32	21.91	365.0	12000.0	3750.0
Ապարան						9	5.35	86.5	2727.3	640.0
Թալին	1	0.51	400.0	400.0	400.0	13	17.99	93.6	5494.5	820.0
Ծաղկահովիտ						2	3.09	79.5	1000.0	362.5
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	14	21.12	104.43	4580.0	1797.8	41	13.33	335.1	10833.3	2635.2
Մասիս	4	3.80	60.3	2323.1	840.8	13	27.27	200.0	11904.8	3100.0
Վեդի	14	10.99	67.6	1168.2	480.3	20	7.49	207.0	10795.1	1933.2
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	1	0.06	92.8	92.8	92.8	46	25.15	294.3	9090.0	1267.1
Բաղրամյան						32	96.96	90.6	2561.1	933.0
Վաղարշապատ	3	13.41	127.7	1050.0	729.7	37	19.26	444.4	11764.7	1954.1
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	1	1.00	561.0	561.0	561.0	103	39.60	199.8	1875.0	475.0
Ճամբարակ								60.5	953.3	352.0
Մարտունի	1	0.13	132.0	132.0	132.0	18	2.07	51.1	2850.0	827.5
Սևան								52.2	2134.8	352.2
Վարդենիս						8	11.92	41.2	2575.1	425.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						17	10.10	170.4	6424.2	595.3
Գուգարք						26	5.02	234.6	6065.9	822.3
Սպիտակ						4	0.88	250.0	5555.5	675.0
Ստեփանավան	1	0.52	169.8	169.8	169.8	6	5.38	90.6	1686.6	408.0
Տաշիր						177	106.73	45.3	1384.4	185.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Արովյան	6	27.31	276.0	2642.5	807.8	23	8.19	279.3	11942.7	3935.0
Եղվարդ	9	24.39	168.8	2733.0	515.7	36	41.02	174.4	11971.8	2465.4
Հրազդան	4	2.33	137.5	891.2	590.8	4	0.86	130.5	10256.4	1085.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						17	19.54	252.0	1693.1	635.6
Ամասիա								40.9	261.0	135.5
Անի						34	31.60	110.6	546.9	454.2
Աշոցք								58.5	215.8	138.5



Արթիկ						13	14.84	79.4	1428.6	509.6
Սյունիքի մարզ										
Գորիս						3	7.51	92.6	1023.2	800.0
Կապան	3	1.95	831.2	1300.0	1031.8	2	2.79	120.0	841.6	400.0
Մեղրի						5	2.00	193.0	3000.0	765.0
Սիսիան						6	3.26	46.3	1977.4	616.2
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						9	1.06	125.0	10000.0	1785.0
Վայք						3	0.36	58.8	1430.7	575.0
Տավուշի մարզ										
Բերդ						3	0.95	213.3	3783.8	670.0
Իջևան	4	2.76	154.4	2400.0	796.2	7	3.66	267.5	9454.5	1465.0
Նոյեմբերյան						2	1.63	46.7	7368.4	985.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2015 թվականի նոյեմբերին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	պայմանագրային գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	շուկայական գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	110.6	1611.2	1611.2	1611.2	14	13854.0	130.7	22200.0	2590.0
Ապարան						1	3390.0	124.1	609.6	390.3
Թալին	1	1929.0	151.2	151.2	151.2	4	6229.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ								60.0	214.3	93.5
Արարատի մարզ										
Արտաշատ						6	6325.2	173.9	7140.3	905.3
Մասիս	36	33887.3	799.6	3690.0	1181.1	16	11423.4	187.5	25000.0	1208.4
Վեդի	1	1547.0	150.5	150.5	150.5	9	9172.0	126.1	5000.0	663.2
Արմավիրի մարզ										
Արմավիր						16	15772.0	131.6	9090.9	1215.3
Բաղրամյան								100.0	833.3	240.0
Վաղարշապատ						32	36036.0	197.4	26528.4	1531.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	3296.0	270.0	270.0	270.0	1	1178.0	186.6	1084.3	684.0
Ճամբարակ						1	402.0	71.3	2286.2	146.8
Մարտունի	4	3444.0	293.3	326.0	313.6	6	6846.6	119.3	5000.0	280.3
Սևան	2	2936.1	411.0	413.8	412.4	1	600.0	240.0	3110.4	335.0
Վարդենիս						3	6492.0	72.5	987.2	150.4
Լոռու մարզ										
Այվերդի	3	317.3	388.5	1150.0	879.5	4	4653.9	114.3	1388.9	216.8
Գուգարք						3	4085.0	77.9	14083.3	1260.4
Սպիտակ								104.9	1348.3	204.0
Ստեփանավան						1	600.0	88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	21	7789.2	410.5	5438.0	3791.5	27	29219.3	264.5	35353.5	1963.6
Եղվարդ	3	2172.0	1266.4	3234.0	2254.7	23	19198.3	173.6	27000.0	2859.6

Հրազդան	2	324.0	397.5	3234.4	1816.0	2	2240.0	117.7	34848.5	1317.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	3	627.6	3703.0	6914.3	5739.1	9	8546.2	113.6	18750.0	335.4
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						5	7767.2	67.9	180.6	203.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ						2	1810.0	111.8	5000.0	218.5
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1510.0	112.2	1700.0	363.6
Կապան	1	600.0	1495.0	1495.0	1495.0	1	1940.0	67.9	2638.9	350.0
Մեղրի	1	277.3	318.1	318.1	318.1	1	490.0	68.5	632.9	260.0
Սիսիան						1	820.0	123.5	875.0	245.5
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	1360.0	96.7	7659.6	508.2
Վայք								120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	156.0	75.8	810.0	125.3
Իջևան						7	7060.0	74.1	14423.1	520.0
Նոյեմբերյան	2	643.0	465.8	932.2	700.0			125.0	1948.1	250.0

2015 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 558 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.5 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 81.0 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2015 թվականի նոյեմբերին, 2015 թվականի հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 9.6 %-ով, իսկ 2014 թվականի նոյեմբերի համեմատ՝ 12.8 %-ով:

2015 թվականի նոյեմբերին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 24 բնակարանի, 40 անհատական բնակելի տան, 250 հասարակական և 57 արտադրական նշանակության օբյեկտի, 171 հողի, 14 ավտոտնակի և 2 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2015 թվականի նոյեմբերին Երևան քաղաքում սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 11 վարձակալության գործարքի քանակը 2015 թվականի հոկտեմբերի համեմատ աճել է 57.1 %-ով, իսկ 2014 թվականի նոյեմբերի համեմատ՝ 83.3 %-ով: 2015 թվականի նոյեմբերին հանրապետությունում վարձակալված 380.04 հա հողից 4.38 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 375.66 հա հողից 369.77 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 3.00 հա արդյունաբերական օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Սյունիքի մարզում՝ 125.54 հա, որից 125.53 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1843 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 11.6 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2015 թվականի հոկտեմբերի համեմատ, աճել է 13.3%-ով, իսկ 2014 թվականի նոյեմբերի համեմատ՝ նվազել 9.0 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (46.0 %), անհատական բնակելի տների (18.6 %), հասարակական նշանակության օբյեկտների (9.2 %) և հողերի (22.0 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 910 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2015 թվականի հոկտեմբերի համեմատ նվազել է 2.7 %-ով, իսկ 2014 թվականի նոյեմբերի համեմատ՝ 23.2 %-ով:

2015 թվականի նոյեմբերին հանրապետությունում գրավադրվել է 289.68 հա հող, որից 4.38 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 91.4 %-ը կամ 264.84 հա գյուղատնտեսական նշանակության, որից 0.10 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արմավիրի մարզում՝ 204.38 հա, որից 203.89 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի նոյեմբերին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 138 գործարք: 2015 թվականի նոյեմբերին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի հոկտեմբերի համեմատ, նվազել է 6.1 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 0.7 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 93 գործարք, որը 2015 թվականի հոկտեմբերի համեմատ նվազել է 12.3 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 7.9 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի հոկտեմբերի համեմատ աճել է 9.8 %-ով, իսկ 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 25.0 %-ով:

2015 թվականի նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 1798 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2015 թվականի հոկտեմբերի համեմատ, նվազել է 7.1 %-ով, իսկ 2014 թվականի նոյեմբերի համեմատ՝ աճել 2.6 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 11.3 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (28.8 %):

#### **«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**